# Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL


Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk



Ապրիլ 2019
Լրատու թիւ 15


## Ողջոյնի Խօսք



ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

2019 թուականի յունուարի 13-ին սկսուեց 2018-19 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի աշխատանքները, թէ՛ աշակերտներն ու ծնողները և թէ՛ ուսուցչուհիներն ու հոգաբարձուները մեծ խանդավառութեամբ և ոգևորութեամբ վերադարձան վարժարան:

Այս եռամսեակի ընթացքում փետրուարի 17-ին տօնեցինք Վարդանանց հերոսամարտի 1568 ամեակը:
Յունւար 20-ին, փետրուար 15-ին և մարտի 17-ին անցկացուեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որոնց ընթացքում ներկայացուեց դասի պլանաւորման և դասաւանդման աւանդական և ժամանակակից մի քանի մեթոդներ: Հանգամանօրէն ներկայացուեց ժամանակակից կրթահամակարգի մէջ իր անփոխարինելի տեղը գտած ԽԻԿ համակարգը, որը յստակօրէն լուսաբանում է ողջ դասապրոցեսի ընթացքը:
Մարտի 31-ին և ապրիլի 7-ին իններորդ դասարանների աշակերտները յանձնեցին հայոց լեզուի գրաւոր, բանաւոր և կարդալու աւարտական քննութիւնները: Յատուկ շնորհակալութիւն Կրթական յանձնախմբի ատենապետուհի տիկին Սիլվա Շամմասեանին ու Վարժարանի Խնամակալութեան ատենապետ և Կրթական յանձնախմբի անդամ Դկտ Գառնիկ Թարվերդիին, որ անցկացրեցին աւարտական քննութիւնները:
Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները փետրուարի 9-ին կազմակերպեցին "Ընդհանուր գիտելիքի մրցոյթ" ձեռնարկը:






երեկոն վարեց վարժարանի նախկին ուսուցչուհի Անի Քինգ Անդերովուղը:

Մարտի 31-ին տօնեցինք Մայրերի օրը, իսկ Ապրիլի 7-ին Սուրբ Զատիկը: 2018-19 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի ընթացքում կատարւած աշխատանքների մասին Դուք կը կարդաք այս համարում: Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատախանատուներին՝ Տիկին Լենա Գիւլխանճեանին, Տիկին Ստելլա Թարվերդիին, Տիկին Անուշ Գեղամեանին:

2019թ ապրիլի 7-ին աւարտուեց երկրորդ եռամսեակը: Զատկական տօների առթիւ ապրիլի 14-ին, ապրիլի 21-ին և ապրիլի 28-ին վարժարանի արձակուրդներ են: 2019թ մայիսի 5-ին կը վերսկսւեն վարժարանի երրորդ եռամսեակի աշխատանքները:

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ շնորհաւորելով Սուրբ Յարութեան տօնի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւններ, անձնական երջանկութիւն:

*Քրիստոս Յարեաւ ի մեռելոց*

*Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի*

Վարժարանի տնօրինուհի՝
Ռուզաննա Թաթուլեան

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:



## Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթ – Quiz Night

Սոյն թւականի փետրուարի 9- ին մի անգամ ևս Թահթաեան վարժարանի գործունեայ ծնողա-կան յանձնախումբը կազմակերպեց տարեկան «Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթ»ը: Ինչպէս միշտ, այս տարի ևս ձեռնարկը քաջալերուեց վարժարանի նախկին և ներկայ ծնողների, ուսուցիչների, աշակերտների և հաւատարիմ բարեկամների կողմից: Ներկաները մեծ խանդաւառութեամբ մասնակցեցին մրցոյթին, հիւրասիրուեցին համեղ ճաշերով և մեկնեցին բարձր տրամադրութեամբ: Շնորհակալութիւն բոլոր այն անձանց որոնց ջանքերով իրականացաւ այս սիրուած մրցոյթը:



Our school's annual social event that always creates a fun competitive atmosphere, took place on February 9th at Twyford Secondary School. The event was accompanied by delicious food and great company. The Parents' Committee presented an array of scrumptious dishes and made sure that everyone was catered for. The questions were prepared by Mr Hratch Tokatlian and the quiz was led by Mrs Ani King-Underwood. A special thank you goes to all involved in organising our popular Quiz Night.











# Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ





Յունուար 20-ին , փետրուար 15-ին և մարտի 17-ին տեղի ունեցան ուսուցիչների վերապատրաստման դասընթացների շարքը, որոնց ընթացքում տիկ Ռ. Թաթուլեանը ներկայացրեց դասի պլանաւորման և դասաւանդման աւանդական և ժամանակակից մի քանի մեթոդներ: Նա հանգամանօրէն ներկայացրեց ժամանակակից կրթահամակարգի մէջ իր անփոխարինելի տեղը գտած ԽԻԿ համակարգը, որը յստակօրէն լուսաբանում է ողջ դասապրոցեսի ընթացքը: ԽԻԿ համակարգը իր մէջ ներառում է իրար հետ սերտօրէն կապուած երեք փուլեր՝ խթանում, իմաստի ընկալում և կշռադատում:

Նա ներկայացրեց բազմաթիւ մեթոդներ, որոնք կարելի է կիրառել այս երեք փուլերի ընթացքում: Տիկ Թաթուլեանը որպէս օրինակներ ներկայացրեց մի քանի դասեր՝ կիրառելով ժամանակակից այս մեթոդները: Արժանի է յիշատակել.

"Հայոց պատմութեան ժամանակացոյցը", "Գոյական անուն", "Հայաստանի 12 մայրաքաղաքները", Մ Կապուտիկեանի "Խօսք իմ որդուն", "Մատենադարան" և այլն:

Ուսուցիչներ մեծ հետաքրքրութեամբ մասնակցեցին վերապատրաստման դասընթացներին:

Աշխատանքները շարունակւելու են:

On 20th January, 15th February and 17th March, a series of teacher training sessions took place during which Mrs. R. Tatulian introduced several traditional and contemporary methods of lesson planning and teaching.

She introduced in detail the different phases of the modern education system, covering whole teaching processes:

- Warm up/Brainstorming
- Introduction/Presentation/ Practice
- Evaluation

She presented various methods that teachers can apply during the different phases.

She demonstrated few lessons as examples, using these methods.

Teachers participated with great interest.

The training sessions will continue...

ԽԻԿ Համակարգ – Իմաստի ընկալման փուլ. Գաղափարների քարտէզ




Կազմեց Ռ Թաթուլեանը

# Սուրբ Վարդանանց Տօն

Փետրվարի 17-ին, ինչպես ամեն տարի, Գ. Թահթաեան վարժարանում նշվեց շատ կարևոր և գեղեցիկ ավանդույթ դարձած "Վարդանանց" տոնը: Տոն, որը մեր երեխաների և գալիք սերունդների մեջ է' ավելի մեծ սեր, հայրենասիրություն և պարտավորվածություն է ներշնչում հայրենիքի, ազգի և հավատի նկատմամբ:
Վարդանանց տոնի խորհուրդը, նրա պատմական դերն ու նշանակությունը ներկայացրեց տիկին Նայիրի Ստեփան Սարգիսեանը:
Այնուհետև վարժարանի երեխաներն իրենց հայրենասիրական երգերով և արտասանություններով, գովերգելով "Քաջ Վարդան"-ին, միևնույն ժամանակ իրենց սերն ու հարգանքն արտահայտեցին մեր' հայրենիքի, մեր' ազգի և մեր' զինվորի նկատմամբ:
Երեխաները ներկայացնելով "Ավարայրի ճակատամարտ"ի թեկուզ փոքրիկ պատկերը, ակամայից բոլորս տեղափոխվում էինք Ավարայրի դաշտ, Տղմուտ գետի ափ, և կարծես մենք մեր մասնակցությամբ օգնում էինք զինվորներին մեր բարոյական և հոգևոր հաղթանակին հասնելու:
Երեխաները շատ լավ գիտակցում են, որ "Քաջ Վարդան"ը իր մեջ մարմնավորում է հայ ազգը, և մեր հայրենիքի հազարավոր ազնիվ ու քաջ սպարապետների ու զինվորների կերպար:











As per tradition, on the 17$^{th}$ February 2019, the Feast of Vartanantz was commemorated at school as the Battle of Avarayr is noted for being one of the most significant battles in the Armenian History. The headteacher welcomed the parents and then, Mrs Nayiri Stepan Sarkissian spoke about the historic significance of the Battle of Avarayr in 451 A.D. Then pupils of all ages sang and recited poems to glorify our national hero and this sacred battle.
By presenting the tableau of the "Battle of Avarayr", we were unconsciously transported to the Avarayr field and as if we were helping the soldiers to reach our moral and spiritual victory.
The children realise very well that Vardan embodies the Armenian nation and the image of thousands of noble and courageous generals and soldiers of our Homeland.

## Պահքի կերակուրներու մատուցումն



Մարտի 22-ին Սուրբ Սարգիս եկեղեցում, Պահքի "Հսկում"ից յետոյ Լոնդոնի Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի ուսուցչական կազմը, Գիւլբենկեան սրահում ներկայներին մատուցեց պահքի կերակուրներ:
Յատուկ շնորհակալութիւն բոլոր նրանց, ովքեր մասնակցեցին, պատրաստեցին և մատուցեցին այդ համեղ կերակուրները:

On March 22nd, following the Vigil Service at St Sarkis Church, a Lenten dinner was presented to all who came to the Gulbenkian Hall. The Lenten food was prepared and presented by teachers of K Tahta Armenian Community Sunday School. Special thanks go to those teachers who prepared all the traditional tasty food and made the evening such a pleasant and successful event.














## Իններորդ դասարանների աւարտական քննութիւնները

Մարտի 30-ին և ապրիլի 7-ին համապատասխանաբար տեղի ունեցան Վարժարանի աւարտական դասարանների արեւելահայերէն և արեւմտահայերէն քննութիւնները:
Քննութիւնները անցկացուեցին երեք բաժիններով՝ ընթերցանութեան և ստեղծագործական մարտի 30-ին, բանաւոր ապրիլի 7-ին:
Աշակերտները պատասխանատուութեան բարձր զգացումով մասնակցեցին քննութիւններին:
Քննական Յանձնախմբի անդամներն էին Դոկ. Գառնիկ Թարվերդին եւ Տիկին Սիլվա Շամմասեանը որ Քննական բոլոր նիւթերը պատրաստել էր:

On March 30th and April 7th the final exams for the leavers took place at school. Pupils from the Western and Eastern Armenian classes took the exams seriously and participated in the reading comprehension, written and oral exams prepared by Mrs Silva Shamassian who also invigilated the exams with Dr Karnik Tarverdi and Mrs Ruzanna Tatulian. Results will follow.



---

## Մայրերի Օր եւ Սուրբ Յարութեան տօն

Ապրիլի 7- ը երկրորդ եռամսեակի վերջին օրն էր, սակայն դպրոցում չէր պակասում աշխոյժութիւնը: Առաւօտեան, աղօթքից յետոյ, մանկապարտէզի, նախակրթարանի և չորրորդ դասարանների աշակերտները արտասանեցին գեղեցիկ ոտանաւորներ նուիրուած հայ մայրիկներին:

Ես իմ մայրիկի աչերն եմ սիրում,
Բարի են նրանք պայծառ աստղի պէս...

Տիկին Թաթուլեանը բացատրեց երեխաներին թէ ինչ պատճառով է Հայաստանում «Մայրերի օր»ը տօնւում ապրիլի 7- ին:
Քանի որ վարժարանը Ս. Զատկի առիթով արձակ է լինելու երեք կիրակի, ուստի օրւայ ընթացքում, վաճառուեցին խմորեղէններ (պասկաներ) և տեղի ունեցաւ վիճակահանութիւն, որին մասնակցողները շահեցին գեղեցիկ նուէրներ:




On April 7th, K Tahta Community Sunday School celebrated Mother's Day with a special morning assembly where the pupils recited heartfelt poems for their mothers. The same day being the last of the term, Easter was celebrated in advance. The Parents' Committee had prepared tasty food and lovely Easter cakes. There was also a prize draw for all the mothers present and the lucky winners received nice gifts.



# Մայրերի Օր եւ Սուրբ Զատիկ

Սոյն թուականին Նախակրթարան Բ դասարանի (տիկ. Անուշ) աշակերտները դասարանում իրենց մայրիկների ներկայությամբ արտասանեցին մայրերին նվիրված ոտանավորներ և իրենց պատրաստած բացիկները ծաղիկների հետ միասին նվիրեցին իրենց մայրիկներին։ Իսկ հետո, ծնողների հետ միասին, պատրաստեցին "Սուրբ Զատիկ"-ի շնորհավորական բացիկներ, ձևավորեցին ու գունավորեցին հավկիթներ։ Վերջում "փնտրիր և գտիր հավկիթները" խաղը շատ մեծ ուրախություն և աշխուժություն պարգևեց երեխաներին և ծնողներին։









## BECOME A VOLUNTEER - MAKE A DIFFERENCE

Dear Parents

K Tahta Armenian School's Parents' Committee plays a pivotal role in the successful running of our school. Our dedicated committee works tirelessly for the benefit of our children and to support the school by raising vital funds. In addition to running the school cafeteria every Sunday and ensuring all children and adults at school are catered for with tasty and nutritious food, the Parents' Committee also plans and organises several social events involving families and friends of the school as well as the wider Armenian community.

To ensure the success of these social events like our popular Quiz Night and Summer BBQ as well as the weekly running of the cafeteria, the committee is in need of more volunteers who would lend a helping hand and give a little of their time whenever they are able to. We appreciate that people are busy and have different priorities but being involved in the school's events can be rewarding and fun, while at the same time raising vital funds for our children and the school.

Getting involved is a great way to show your children that you take an interest in their education. It also sends a positive message that you consider school a worthwhile cause. Parent volunteers offer a huge resource and support base for the school community. They also demonstrate to their children the importance of participating in the larger community. As your child is a member of K Tahta Armenian Community Sunday School, you are automatically a member of our community...your support counts! Offering just a little of your time to help the Parents' Committee is invaluable. If everyone could spare a few hours a term to help, just think what we could achieve! Therefore we would like to see as many mums and dads as possible being involved and willing to help in a variety of ways - from designing a flyer, cleaning up after an event, making tea and coffee, baking cakes, helping out on a stall...so many ways. This could be on a one off occasion or on a regular basis.

We have setup a Doodle page so that you can choose a day that suits you. Please see link below. We would appreciate if you could sign up and we will then contact you with further information. https://doodle.com/poll/awhewk6a9vcy9nc4

Thank you to all those who have and continue to support the school and we ask from all of you to please volunteer and lend a helping hand anyway and anytime you can.

Sincerely

K Tahta Armenian Community Sunday School's Governors



## 2018-2019 Տարեշրջան

| | |
|---|---|
| **Առաջին Եռամսեակ 9 Սեպտ. 2018 – 16 Դեկտ. 2018<br>Term I 9 September 2018 – 16 December 2018** | |
| 9 Սեպտեմբեր<br>9 September | Վերամուտ<br>Back to school |
| 13 Հոկտեմբեր<br>13 October | 40 ամեակին նուիրուած հանդիսութիւն<br>40th Anniversary Celebration |
| 21 Հոկտեմբեր<br>21 October | Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն<br>Culture Day |
| 28 Հոկտեմբեր<br>28 October | Արձակուրդ<br>Half-Term Break |
| 25 Նոյեմբեր<br>25 November | Ծնողական Ընդհանուր Ժողով<br>Parents' Meeting |
| 2 Դեկտեմբեր<br>2 December | Նոր Տարուայ Հանդէս<br>New Year's Celebration |
| **Երկրորդ Եռամսեակ 13 Յունուար 2019 – 7 April 2019<br>Term II 13 January 2019 – 7 April 2019** | |
| 9 Փետրուար<br>9 February | Ընդհանուր Գիտելիքներու Մրցում<br>Quiz Night |
| 17 Փետրուար<br>17 February | Վարդանանց Տօն<br>St Vartan's Day |
| 24 Փետրուար<br>24 February | Արձակուրդ<br>Half-Term Break |
| 31 Մարտ<br>31 March | Մայրերու Օր<br>Mothers' Day |
| 7 Ապրիլ<br>7 April | Զատկուայ Հանդէս<br>Easter Celebration |
| **Երրորդ Եռամսեակ 5 Մայիս 2019 –7 Յուլիս 2019<br>Term III 5 May 2019 – 7 July 2019** | |
| 19 Մայիս<br>19 May | Աշակերտական գիտելիքներու մրցում<br>Quiz for students |
| 26 Մայիս<br>26 May | Մարզական Օր<br>Sports' Day |
| 23 Յունիս<br>23 June | Դաշտահանդէս<br>School BBQ |
| 7 Յուլիս<br>7 July | Ամավերջի Հանդէս<br>End of Year Assembly |

*Խմբագիրներ՝ Տիկ Ստելլա Թարվերդի,*
*Տիկ Ռուզաննա Թաթուլեան, Տիկին Անուշ Գեղամեանին*
*Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան*
*Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան*